ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Austrian Development Cooperation

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
THE MINISTRY OF ECONOMY OF THE RA

Austrian Development Agency



# ԴԻՄԻ՛Ր ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՐՈՒ՛ ՔՈ **ԿԱՆԱՉ** ԿԱՄ **ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱԳՐՈԲԻԶՆԵՍԸ**

ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՄԻՆՉԵՎ

**ՄԱՐՏԻ 29-Ը**

«ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության ու համաֆինանսավորվում է Ավստրիական զարգացման համագործակցության կողմից: Ծրագիրն իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության և ՄԱԶԾ-ի կողմից: Կառավարության կողմից ծրագրի գործընկերն է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Ծրագրի գլխավոր նպատակն է Հայաստանում խթանել կայուն, նորարարական և շուկային միտված գյուղատնտեսությունը:

## ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ

**1**

Ներբեռնի՛ր հայտադիմումը և հարակից բոլոր փաստաթղթերը հետևյալ կայքերից.

- Ծրագրի կայք **(www.gaiaarmenia.am)** (լուրեր բաժին)
- Էկոնոմիկայի նախարարություն **(www.mineconomy.am)** (Մեդիա/հայտարարություններ բաժին)

**2**

Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարդա՛ Հայտամրցույթի փաստաթուղթը, հետո **ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՐՊՈՎ** լրացրու հայտադիմումը և հարակից **ԲՈԼՈՐ** փաստաթղթերը:

**3**

Ուղարկի՛ր բոլոր լրացված փաստաթղթերը փակ ծրարով՝ **ՄԻԱՅՆ** պատվիրված նամակով, փոստով կամ մասնավոր սուրհանդակային ծառայության միջոցով, կամ էլ հանձնի՛ր առձեռն հետևյալ հասցեով՝ **ՀՀ, ք. Երևան 0010, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, Վ. Սարգսյան 26/1 փողոց, 610-611 սենյակներ:**

# Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԴԻՄԵԼ



## ԿԱՆԱՉ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ, ԼՈՌՈՒ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԵՐ



Կանաչ գյուղատնտեսության աջակցության մրցույթին կարող են դիմել Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերի ֆերմերները և արտադրողները:

Ընտրված արժեշղթաներն են՝ **միրգ, հատապտուղ և բանջարեղեն**:



## ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ՄԱՐԶԵՐ

Օրգանական գյուղատնտեսության աջակցության մրցույթին կարող են դիմել այն ֆերմերներն ու արտադրողները, որոնք բնակվում կամ գրանցված են Հայաստանի ցանկացած մարզում և ներգրավված են **ցանկացած տեսակի օրգանական գյուղատնտեսական արտադրության** մեջ:

# Ի՞ՆՉ Է ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԾՐԱԳԻՐԸ

Գյուղատնտեսական ծրագրի աջակցության շրջանակներում կտրամադրվեն հիմնական միջոցներ, որոնց ցանկին կարող եք ծանոթանալ ծրագրի կայքում ներառված «Հայտամրցույթ» փաստաթղթում:

www.gaiaarmenia.am




**ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ.** շահառուներին տրամադրվելու են միայն հիմնական միջոցներ, այլ ոչ թե կանխիկ կամ կանխիկին համարժեք դրամաշնորհներ:

# ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ

## ԿԱՆԱՉ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝

ՄԻՆՉԵՎ **10,000 ԵՎՐՈՅԻՆ**
համարժեք հիմնական միջոցներ

## ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝

**20,000 ԵՎՐՈՅԻՆ**
համարժեք հիմնական միջոցներ՝ այգեգործական արժեշղթաների համար

**10,000 ԵՎՐՈՅԻՆ**
համարժեք հիմնական միջոցներ՝ մեղվաբուծական արժեշղթաների համար

ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝

**ՄԱՐՏԻ 29**

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել **+374 93 144 635** հեռախոսահամարով կամ գրել ծրագրի ֆեյսբուքյան էջին:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հայաստանում «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն» ծրագիրը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության տեսակետները:

**© 2023 Ավստրիական զարգացման գործակալություն**
**Բոլոր իրավունքները պաշտպանված են:**
**Արտոնագիր՝ Եվրոպական միություն:**